

Ինչպէս յայտնի է, ժամանակակից ամէնէն կորովի, ձեռներէց ու գործունեայ եկեղեցականներէն մին, Եղիազար Այնթապցի, ծրագրած էր Թուրքիոյ Հայոց կաթողիկոսութիւն մը ստեղծել, իբրեւ կեդրոն ունենալով Երուսաղէմը: Այս նպատակով Եղիազար Այնթապցի Երուսաղէմի մէջ — որուն պատրիարքութեան հրովարտակը ստացած էր արդէն — դաւադրաբար համաձայնած էր Կիլիկիոյ Խաչատուր Կաթողիկոսին հետ, որպէսզի զինքը օժէ: Ազգը պառակտել սպառնացող այս ծրագիրին արձագանգը Պոլիս հասած էր արդէն: Սարգիս պատրիարք Թէքիրտաղցի և Պոլսոյ մեծամեծները որոշած էին Եղիազարի աշակերտը Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանը զրկել Հալէպ, որպէս զի համոզէ զինք հրաժարելու այս գաղափարէն:

Ինչպէս տեսնուեցաւ, Սարգիս Թէքիրտաղցի, Եղիազարէն հալածուած, Պոլիս եկած էր և հոն բանտարկուած: Եղիազար, իբր անհաւատարիմ նուիրակի, հաճառակ էր անոր: Յովհաննէս Թիւթիւնճի, հետեւաբար, բնական զինակից մըն էր Եղիազարի, քանի որ ինքն ալ հակառակ էր Սարգիսի և անոր տապալումին կ'աշխատէր: Եղիազար հոն, իր ծրագիրը յաջողցնելու համար, Պոլսոյ պատրիարքին գործակցութեան պէտք ունէր և Սարգիս՝ իբր հակառակորդ՝ բռնաւ պիտի չուզէր օգնել իրեն. ուստի՝ ինքն ալ Յովհաննէս Թիւթիւնճիի օգնելուն մէջ շահ ունէր:

Այնպէս որ Եղիազարի ձեռնարկին կը թոյլ, թէ կանուխէն օժանդակած է Յովհաննէս Թիւթիւնճի: Ասիկա որոշ կ'երեւի 1664 Սեպտ. 13 թուականով նամակի մը մէջ, զոր Եղիազարի գրած է Տ. Մարտիրոս ք. Քէօմիւրճեան, իր որդւոյն՝ Երեմիա Զէլէպիի իբր յանձնարարական, երբ ան Հալէպ կ'երթար իբր բանագնաց: